



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ*

Առարկան՝ *Կերպարվեստ*

Հետազոտող ուսուցիչ՝ *Ռուզաննա Փիլիպոսյան*

Ուսումնական հաստատություն՝ *ՀՊՄՀ հենակետյաին վարժարան*

Երևան 2022

Բովանդակություն

Ընտանիքի հոգեբանություն, հոգեբանության բաժին է, որն ուսումնասիրելով Էվոյուցիան ու բնույթը ամուսնության և ընտանեկան հարաբերությունների, նրանց առաջացման յուրահատկությունները, ձևավորումը, կայունացումն ու քայքայումը, նկարագրելով ընտանեկան և ամուսնական հատկանիշների, ընտանիքի անդամների սոցիալ-հոգեբանական և ֆունկցիոնալ առանձնահատկությունները միմյանց հետ¹:

1960-1970-ական թվականներին՝ ամուսնությունն ու ընտանիքը հետազոտությունների առարկա դարձան մասնագետների, այդ թվում նաև հոգեբանների կողմից: Սկզբում ընտանիքը ուսումնասիրվել է հոգեկան հիվանդությունների հետ կապված կանխարգելումը կամ ընտանիքի դաստիարակության թերությունները: Ավելի ուշ, ընտանիքի հոգեբանության տեսողական դաշտում աչքի ընկան այնպիսի գիտության բնագավառներ ինչպիսիք են՝ պատմությունը և էվոյուցիայի ամուսնության ձևը, ընտանեկան կյանքի ցիկլը, ամուսինների փոխհարաբերությունները, ծնողների և երեխաների փոխհարաբերությունները, ընտանիքի և հասարակության փոխհարաբերությունները և այլն:

Ընտանեկան հոգեբանության տիրույթում է գտնվում ընտանիքում՝ սեռական հարաբերությունների հարցը:

ԱՐԴԻ ԲԶԶԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

§ 1. Ընտանիքի զարգացման խնդիրը

Արդի ընտանիքիների առաջացումը և հետագա գոյատևումը հետազոտողներն անվանում են «զարգացում» և ապա՝ փորձում առանձնացնել դրա որոշակի փուլեր: Վիճելի համարելով ընտանիքի զարգացման անլուծելի խնդրի մասին տարբեր փուլերում առանձնացվող տեսակետը՝ գտնում ենք, որ այն լուրջ վերանայման կարիք ունի և այդ նպատակով առաջադրում ենք մի շարք դրույթներ:

Ներածություն

Ընտանքն ամուսնության, ազգակցության կամ որդեգրման վրա հիմնված մարդկանց փոքր խումբ, որն ապրում է մի հարկի տակ և վարում է ընդհանուր տնտեսություն: Ընտանիքի անդամները սովորաբար միմյանց հետ կապված են զգացմունքային կապերով, միմյանց նկատմամբ զգում են փոխադարձ պատասխանատվություն: Ընտանիքը նաև սոցիալական ինստիտուտ է, այսինքն՝ մարդկանց փոխհարաբերությունների կայուն ձևը, որի շրջանակներում իրականացվում է մարդկանց առօրյա կյանքի հիմնական մասը սեռական հարաբերություններ, մանկածնություն և երեխաների սկզբնական սոցիալականացում, կենցաղային խնամքի, կրթական և բժշկական սպասարկման նշանակալի մաս և այլն:

Առավել տարածված տիպը նուկլեար ընտանիքն է (լատ. nucleus - կորիզ), որը բաղկացած է ամուսինների մեկ զույգից՝ երեխաներով կամ առանց երեխաների:

Պարագրաֆներ

Ընտանիքի տեսակները

Նուկլեար ընտանիքը կարող է լինել նաև լրիվ կամ ոչ լրիվ՝ բաղկացած մեկ ծնողից և երեխաներից: Ընտանիքը դառնում է ոչ լրիվ ամուսնալուծության, այրիանալու, միայնակ մայրության հետևանքով:

Եթե ընտանքում ամուսնական գույզից և նրանց երեխաներից բացի կան այլ ազգականներ, ապա այն կոչվում է ընդլայնված ընտանիք կամ գերդաստան:

Ընտանեկան հարաբերությունների հիմքում ընկած է ընտանիքի պատմական զարգացումը: Այսինքն այն զարգանում է պարզից դեպի բարդ, մայր իշխանությունից դեպի հայր իշխանություն, պոլիգամիայից դեպի մոնոգամիա:

Ընտանիքը դասակարգվում է ըստ դունկցիաների և ըստ կառուցվածքի:

1. Էնդոգամիա կամ Էկզոգամիա- Էնդոգամիա ամուսնություն միևնույն սոցիալական շերտի միջև, Էկզոգամիա՝ հասարակության տարբեր շերտերի միջև ամուսնություն:

2. Պոլիգամիա, մոնոգամիա և հերթափոխվող մոնոգամիա - պոլիգամիան դա բազմամուսնությունն է, այսինքն՝ պոլիանդրիա (մեկ կին մի քանի տղամարդ) և պոլիգիմիա (մեկ տղամարդ, մի քանի կին): Մոնոգամիան դա մենամուսնությունն է՝ մեկ կին, մեկ տղամարդ և հերթափոխվող մոնոգամիան դա կոնկրետ ժամանակաշրջանում ապրում են մեկի հետ, հետո ամուսնալուծվում և նորից են ամուսնանում:

3. Ավանդական հայրիշխանություն ,ավանդական մայրիշխանություն , նեոհայրիշխանություն (նոր), նեոմայրիշխանություն և էգալիտար ընտանիք (հավասար իրավունքներով ընտանիք):

Ավանդական հայրիշխանություն- հին ավանդական ընտանիքն է, որտեղ ընտանիքի գլուխը ամենամեծ տղամարդն է:

Նեոհայրիշխանություն- երբ տղամարդն իր վար է կրում բոլոր տնտեսական խնդիրները, մշակում է ընտանիքի հեռանկարային պլանը, իսկ կինը լուծում է կոնկրետ մասնավոր խնդիրներ և ապահովում ընտանիքի բարոյաև հոգեբանական կայունությունը:

Էգալիտար- երբ բոլոր իրավունքները հավասար են:

4. Լրիվ ընտանիք, կիսատ և ֆունկցիաների առումով կիսատ ընտանիք:

Լրիվ ընտանիքի մոդելն արդեն իսկ պարզ է, իսկ երկրորդ խմբի ֆունկցիաների առումով ընտանիքի տեսակներն են՝ նորմալ, բարենպաստ, անբարենպաստ և այն ընտանիքները, երբ ամուսինները ամուսնական կյանքով բավարարված են կամ որևէ մեկը բավարարված չէ:

Ընտանիքը բաց համակարգ է և այն անընդհատ ենթարկվում է շրջապատին, փոփոխվող ազդեցություններին:

Իր ներքին ներդաշնակությունը ապահովելու համար նա պետք է ապահովի 3 կարևոր գործնական ներդաշնակությունը՝

1. **Ասիմիլացիայի** - այն ապահովում է ընտանիքի ներքին կայունությունը:

2. **Ակոմոդացիայի** - այն ապահովում է նորի մուտքը ընտանիք առանց հին վնասելու:

3. **Ադապտացիայի** - արդյունքում ապահովում է ադապտացիայի գործընթացը:

Ճգնաժամային ընտանիք - հետաքրքրությունների և պահանջմունքների հակադրությունները կրում են սուր բնույթ և ներառում է ընտանիքի կենսագործունեության կարևորագույն ոլորտը, այսինքն՝ կոնֆլիկտի համար ազդակ կարող են դառնալ բոլոր վերոհիշյալ պատճառները: Ամուսինները զբաղեցնում են անհանդուրժողական, աններողամիտ, և նույնիսկ թշնամական դիրք մեկը մյուսի նկատմամբ, չհամաձայնվելով ոչ մի զիջման: Ճգնաժամային ամուսնական միությունների թվին կարելի է դասել նաև այն ընտանիքները, որոնք քայքայվում են, կամ գտնվում են փլուզման եզրին:

Կոնֆլիկտային ընտանիք - ամուսինների միջև առկա են մշտական ոլորտներ, որոնցում իրենց հետաքրքրությունները բխվում են, առաջ բերելով ուժեղ և շարունակական բացասական հուզական վիճակներ: Սակայն ամուսնությունը կարող է պահպանվել ուրիշ գործոնների շնորհիվ, ինչպես նաև զիջումների եւ կոնֆլիկտների փոխզիջումային լուծումների միջոցով:

Պրոբլեմային ընտանիք - սրան բնորոշ են դժվարությունների տևական գոյությունը, որն ընդունակ է զգալի հարված հասցնել ամուսնության կայունությանը: Այսպիսի ընտանիքներում հավանական է փոխհարաբերությունների սրացում, ամուսիններից մեկի, կամ երկուսի մոտ էլ հոգեկան խանգարումների դրսևորում:

Ներքոտիկ ընտանիք - այստեղ հիմնական դերը խաղում են այն գործոնների կուտակումը, որոնք հանգեցնում են հոգեբանական դժվարությունների: Ամուսինների մոտ նկատվում է բարձր տազնապայմություն, քնի խանգարում, ցանկացած առիթով հուզական դրսևորումներ, բարձր ագրեսիվություն և այլն: Ամուսինների կոնֆլիկտային վարքը կարող է դրսևորվել գաղտնի, քողարկված և բաց ակնհայտ ձևերով: Անձի, անհատի կայացումը, սոցիալականացումը սկսվում են ընտանիքում:

Նորմալ պայմաններում ծնողների վարքը ընթանում է 3 մոդելներով.

1. Ծնողի վերահսկողության մոդելն է, երբ ծնողը ուշադիր է բարյացակամ վերաբերմունք ունեն երեխայի նկատմամբ, բայց նաև հսկում են երեխային և որոշակի պահանջներ ներկայացնում, կատարում են երեխայի ցանկությունները, բայց ունեն իրենց հստակ ուղղվածությունը և բացատրում են երեխային իրենց պահանջների իմաստը: Այս երեխաների մոտ արտահայտվում են բարձր մակարդակի ինքնուրույնություն, հետաքրքրասիրություն, ընկերասիրություն, շրջապատում կողմնորոշվելու կարողություն:

2. Ծնողի գերիշխման մոդելն է, երբ ծնողները խիստ են, պատժում են, համարյա քիչ են շփվում երեխայի հետ, երեխան իր սեփական կարծիքն արտահայտելու իրավունք չունի: Այս ընտանիքը երեխային օտարելու հնարավորություններ է ստեղծում և նման ընտանիքում երեխայի սոցիալականացումն անհնար է: Այս երեխան շատ ցածր ինքնագնահատական ունի, չի վստահում մարդկանց և ինքնամփոփ է:

3. Ներողամտության մոդել, երբ ծնողները ներողամիտ են, պահանջկոտ չեն, ընտանիքը առանձնապես չի զբաղվում երեխայի դաստիարակությամբ: Այս երեխաների մոտ շատ ցածր ինքնատիրապետում կա, ինքնավստահությունը շատ ցածր մակարդակի վրա է: Այսպիսի ընտանիքում մեծացող երեխան արագ անկախանում է, որովհետև բարձիրթողի է, ազատ: Չունեն հետաքրքրություններ, նրան զգում են որ բեռ են ընտանիքի համար:

Կոնֆլիկտներ

Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, եթե չկան վեճեր նշանակում է ընտանիքում տիրում է սառը պաշտոնական հարաբերություններ: Ընտանեկան վեճերն իրենց բնույթով կարող են լինել պերմանենտ (անընդհատ): Նման ընտանիքները հիմնականում լինում են քրեածին, կոնֆլիկտածին, ամբարենպաստ ընտանքիներ:

Վեճերի ժամանակ գլխուղեղի կեղևում առաջանում է օպտիմալ գրգռման օջախ, որը կարող է ընդգրկել ահռելի ու ավելի կետերի տարածք:

Այս դեպքում մարդը կորցնում է ինքնատիրապետումը, դիմացինին լսելու ունակությունը և վեճը վերածվում է կոնֆլիկտի: Ցանկացած վեճի հիմքում ընկած է անհատականության երևույթը, այսինքն անհատականը:

Մարդը աշխատում է հնարավորինս վիրավորելով դիմացինին բարձրացնել "Ես"-ի արժեքը: Կոնֆլիկտի հիմնական պատճառը անձնավորության որևիցե պահանջմունքի չբավարարված լինելն է: Սկսած ֆիզիկական, կենսաբանական, ֆիզիոլոգիականից մինչև հոգևոր պահանջմունքները:

Կոնֆլիկտների մեխանիզմը հասկանալու համար անհրաժեշտ է առանձնացնել պատկերացումների 3 համակարգ՝

1. **Էզոցենտրիկ համակարգ** - որի հիմքում ընկած է սեփական Ես-ը, այլ մարդիկ կամ առարկաները հանդես են գալիս որպես կամ օգտակար գործիք կամ խոչընդոտ:
2. **Այլենտրոցենտրիկ համակարգ** - կենտրոնում ընկած է ուրիշը:
3. **Սոցիոցենտրիկ** - հիմքում ընկած է մեկը:

Ընտանիքի համար ճգնաժամային շրջաններն են՝

1. **Միմյանց հարմարվելու փուլ**՝ ամուսնական կյանքի առաջի տարին է, երբ ձեվավորվում է նոր որակի հարաբերություններ, նոր հոգևոր արժեքներ:
2. **Երեխա ունենալու փուլ**՝ երեխաների ծնունդը բարդացնում է ամուսինների մասնագիտական աճի հնարավորությունները, քիչ ժամանակ է տրամադրվում անձնական գրավիչ գործունեությանը (հորբի), կնոջ հոգնածության պատճառով, կապված երեխայի խնամքի հետ, ժամանակավոր սեռական ակտիվության նվազումը:
3. **Բախման փուլ**՝ երեխաների դաստիարակության վերաբերյալ ամուսինների և նրանց ծնողների հայացքների, տեսակետների բախումը:
4. **Միապաղատության, կամ միջին ամուսնական տարիքի փուլ**՝ այս շրջանը երբեմն անվանում են նաև զգացմունքների հազեցվածության փուլ, կամ քաղցի շրջան:
5. **Իվոլուցիոն, կամ միայնակության զգացման փուլ**: Այս շրջանը համարվում է 18-ից 24 տարի համատեղ կյանքից հետո, որը հաճախ համընկնում է ինվոլուցիոն շրջանի հետ: Կարող է ձեւավորվել միայնակության զգացում՝ կապված երեխաների հեռանալու հետ: Այս փուլում

հսկայական նշանակություն ունեն արտաքին գործոնները՝ նյութական վիճակի վատթարացումը, աշխատանքի անցնելու անհնարինությունը, սեփական բնակարանի բացակայությունը և այլն:

Ընտանեկան անբավարարվածության վիճակն առաջանում է կոնֆլիկտային իրավիճակների արդյունքում, որոնցում դրսևորվում է տարաձայնություն տվյալ անհատի վերաբերյալ, սպասումների և նրա իրական կյանքի միջև: Կոնֆլիկտից կոնֆլիկտ, կուտակվելով, այսպիսի անբավարարվածությունը արտահայտվում է հուզական պոռթկումներում և հիստերիկ դրսևորումներում, որոնց հաճախականացումը կարող է լրջորեն խաթարել ընտանիքի ամրությունը:

Ճնշող մեծամասնությամբ, պատճառները, որոնք հանգեցնում են ընտանիքում կոնֆլիկտային իրավիճակի, առաջ են բերվում սոցիալական գործոններով:

Ընտանեկան խորհրդատվություն

Ընտանեկան հոգեբանական խորհրդատվությունը ապահովում է ընտանեկան հարաբերությունների շտկում և ներդաշնակություն անհատական և խմբային խորհրդատվության միջոցով:

Ընտանեկան խորհրդատվությունը ունի մի շարք առանձնահատկություններ, առաջին հերթին այն ուղղված է այն մարդկանց որոնք չունեն հոգեբանական խանգարումներ: Խորհրդատվության ժամանակ մասնագետը օգնում է անհատին հասկանալու տեղի ունեցածը և լուծել իր խնդիրները:

Ընտանեկան խորհրդատվության առանձնահատկություններն են.

1. Ընտանեկան խորհրդատուները խնդիրը տեսնում են միայն կոնկրետ անձի մեջ այլ ոչ միջանձնային հարաբերությունների ցանցում:
2. Այստեղ մասնագետից պահանջվում է ավելի մեծ ակտիվություն և վերահսկողություն, քան մյուս դեպքերում:
3. Ընտանեկան խորհրդատվության ժամանակ մասնագետը կարող է օգտագործել միաժամանակ տարբեր մոտեցումներ, այսինքն խորհրդատուն պետք է լինի շատ ճկուն:
4. Ընտանեկան խորհրդատուի կենտրոնում պետք է լինի կազմակերպչական կառույցները և նա պետք է զարգացնի այն գործընթացները, որոնք ընտանեկան համակարգի մի մասն են կազմում:

Ընտանիքում տեղի ունեցող յուրաքանչյուր իրադարձություն ենթարկվում է շրջանաձև պատճառականության:

Յուրաքանչյուր խորհրդատվության ժամանակ խորհրդատուն ստուգում է իր վարկածը կապված ընտանիքի դիսֆունկցիայի առաջացման իմաստի և նպատակի վերաբերյալ:

Չեզոքությունը խորհրդատուի ներքին դիրքորոշման բնութագրումն է: Խորհրդատուն պարտավոր է չդատապարտել և չքննադատել:

Նա պետք է կարողանա ստեղծել ռապորտ , հաստատի ինֆորմացիան որն ունի ընտանիքի վերաբերյալ և տա լուծումներ:

Հոգեբանը ծանոթանալով ընտանիքի շփման գործին, արժեքային համակարգին նա պետք է

կարողանա դառնալ ընտանիքի անդամ և ունենա որոշակի դեր՝ առաջատար դեր և կարողանա ընտանիքում փոփոխություններ մտցնել:

Երեխայի դաստիարակություն

21-րդ դարը սովորեցնում է ծնողներին երեխաների դաստիարակությունը ուղղել գիտակցության զարգացման, ճանաչողական և կամային գործընթացների վրա: Բայց թե՛ մեծահասակների, թե՛ փոքրահասակների ներքին աշխարհում կա ենթագիտակցություն, հուզմունքներ ու զգացմունքներ՝ ներքին աշխարհի այն մասը, որ հաճախ դառնում է նյարդային ճգնաժամերի, դեպրեսիաների և անքնության պատճառ նույնիսկ մեծահասակների մոտ:

Օրինակ, Հնդկաստանում, որտեղ գոյություն ունի մարդու ներքին հոգեկան աշխարհի հանդեպ ուշադրության հնագույն ավանդույթ, հեքիաթը կիրառվում է որպես հոգեթերապևտիկ միջոց: Ներթափանցելով հեքիաթային աշխարհ՝ երեխան թափանցում է սեփական հոգու խորքերը և հեքիաթի միջոցով սկսում է կարգավորել այն:

Մինչև գրավելը, հեքիաթը միլիոնավոր անգամ պատմվել է, և անէական բաները կորել են, մնացել է միայն ամենագլխավորը, ինչը դարձրել է հեքիաթը մարդկային իմաստության գոհար: Երեխաները շնչավորում են բնության երևույթները, կենդանիներին և բույսերին, այս պատճառով հեշտությամբ են հասկանում հեքիաթների լեզուն: Հեքիաթի հերոսները պարզ և տիպիկ են, հեքիաթում միշտ բարին հաղթում է չարին, բարոյական հասկացությունները փոխանցվում են հասկանալի կերպով:

Երեխան կարող է լսել հեքիաթը սկավառակով, դիտել հեռուստատեսությամբ, բայց ամենալավ տարբերակը երեխային նայելով պատմելն է, նրա հարցերին պատասխանելը: Այս կերպ կարող եք նկատել, թե անձնային աճի որ աստիճանը չի կարողանում երեխան հաղթահարել: Այդ դեպքում կարող եք պատմել համապատասխան հեքիաթ կամ նրա ամենասիրելի հեքիաթը:

Ընտանիք, գույգերի համատեղելիություն, սոցիալական դերեր

Մաքսիմ Գորկին ընտանեկան փոխհարաբերությունները սահմանել է հետևյալ կերպ.
«Ընտանիքում փոխհարաբերությունները կառուցվում են միասնական ցանկության հիման վրա, այն է՝ սովորել հասկանալ միմյանց: Եթե ձեզ մոտ բավականացնի համբերությունը, և դուք կարողանաք քննարկել առաջացած խնդիրները, ապա ձեր ընտանիքն այդ փաստից միայն կշահի»:

Ներկա ժամանակաշրջանում բազմաթիվ ընտանիքներ քայքայվում են, քանի որ չկա այն արժեհամակարգային հիմքը, որը պատկերացում է տալիս ընտանեկան կառույցի և փոխհարաբերությունների մոդելի և գործառույթների մասին: Որքան հնարավոր է կարճ և բովանդակալից կներկայացնենք հիմնային այն գաղափարները, որոնք բնութագրում են ընտանիքը, գույգերի համատեղելիության էությունը և սոցիալական դերերի կարևորությունն ու ընդունումը:

Ընտանիքն ամենաառաջին սոցիալական ինստիտուտն է, այն առաջացել է ավելի վաղ, քան կայսրությունները, հանրապետությունները, բանակը, կրթությունը, շուկան: Ընտանիքի էության և բնույթի մասին անցյալի մտածողները մոտեցել են տարբեր տեսանկյուններից: Առաջին փորձը, որ վերաբերում էր ամուսնարնտանեկան հարաբերությունների բնութագրմանը, պատկանում է

հին հունական փիլիսոփա Պլատոնին: Ընտանեկան կառույցը նա համարում էր անփոփոխ, հասարակական հաստատուն կառույց:

Դրան են անդրադարձել նաև Արիստոտելը, գերմանացի փիլիսոփաներ Կանտը, Հեգելը: Ժամանակակից սովետական սոցիոլոգներն ամուսնությունը բնորոշում էին՝ որպես տղամարդու և կնոջ միջև փոխհարաբերությունների պատմականորեն փոփոխվող սոցիալական կառույց, որի արդյունքում հասարակությունը կանոնակարգում և բաշխում է գույզերի սեռական և ծնողական հարաբերությունների պարտավորությունները և օրենքները:

Մարդկանց դրդող պատճառներն ու մոտիվները՝ միմյանց հետ հարաբերվելու, հարաբերություններ հաստատելու, օրինական հարաբերությունների մեջ մտնելու, պատճառաբանվում են մարդկային պահանջմունքների առկայությամբ:

Ընտանիքի դասական բնութագրումն այն է, որ ընտանիքը փոքր սոցիալական խումբ է, որի անդամները միմյանց հետ կապված են ամուսնական կապով, ծնողական և բարեկամական հարաբերություններով, կենցաղով, ընդհանուր բյուջեով և փոխադարձ բարոյական պատասխանատվությամբ:

Ընտանեկան կյանքն ուղեկցվում է նյութական և հոգևոր գործընթացներով, ընտանիքում կատարվում է սերնդափոխություն, որում մարդը ծնվում է, որի միջոցով շարունակվում է սերունդը: Ընտանիքը, նրա կառուցվածքը և ֆունկցիաներն ուղղակիորեն կախված են ամբողջապես հասարակական հարաբերություններից, ինչպես նաև հասարակության մշակութային էթիկայից: Բնականաբար, որքան բարձր է հասարակության էթիկան, այնքան բարձր է ընտանիքի էթիկան:

Պատաստվակին համատեղելիությունը բնորոշել է հետևյալ տողերով. «Սերն ունի հազարավոր դրսևորումներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր լույսը, իր տխրությունը, իր երջանկությունն ու օրհնանքը»:

Ընտանիքում մեծ դեր է տրվում ամուսնական համատեղելիությանը, որը մի քանի տեսակի է լինում.

- Սոցիալական համատեղելիություն. սա աշխարհայացքների ընդհանրությունն է, կարևոր արժեքների համընկնումը՝ «իդեալներ, համոզմունքներ, հետաքրքրություններ, պահանջմունքներ»:
- Հոգեբանական համատեղելիություն. ենթադրում է բնավորության, հատկանիշների, ամուսինների անձնականային առանձնահատկությունների փոխհարաբերություն:
- Սեռական համատեղելիություն. ներդաշնակություն, մեկի սեռական պահանջմունքների համապատասխանումը մյուսի սեռական պահանջմունքի հետ:
- Ընտանիքի կեցության համապատասխանում. կարևորում է ընտանիքի ոճի, ընդհանուր զարգացման նպատակի համապատասխանեցումն ընտանեկան սոցիալական դերերին:

Ընտանեկան սոցիալական դերեր

«Ոչինչ այնքան ցանկալի չէ, որքան դիմացինին փոխելու մեր անհազ ցանկությունը», - ասել է Մարկ Տվենը:

Յուրաքանչյուր մարդ իր ողջ կյանքի ընթացքում սովորում է ի կատար ածել տարբեր դերեր՝ երեխայի, աշակերտի, ուսանողի, հոր կամ մոր, ինժեների, բժշկի, սոցիալական տարբեր շերտերի ներկայացուցիչների դերեր և այլն: Դերային ընկալումն անհրաժեշտ է, որպեսզի կարողանան իրականացնել հետևյալ դերերը.

- Կատարել պարտականությունները և իրականացնել ներկայիս դերին համապատասխան իրավունքները,
- Տվյալ դերին համապատասխան զգացումների և ապրումների, կառույցների ձեռքբերում:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ամուսնական բավարարվածությունը բխում է ոչ այնքան ամուսինների իրական վարքից, որքան մի ամուսնու վարքային գնահատականից դեպի մյուսը:

Ընտանիքի հոգեբանական բնութագիրը

Ընտանիքի հոգեբանությունը՝ որպես հոգեբանության մի առանձին ճյուղ, ուսումնասիրվել է բազմաթիվ հոգեբանների կողմից: Ինչպես հայտնի է ժամանակակից գրականությունից ընտանեկան կյանքին նախապատրաստելու կարևոր ուղղություններից մեկն այն է, որ աղջիկներն ու պատանիները հասկանան, որ ամուսնությունը ոչ թե ընտանեկան երջանկությունն ընտրելու ավարտն է, այլ նրա սկիզբը: Յուրաքանչյուր երիտասարդ մինչ ամուսնանալը պետք է տեղեկացվի, թե ինչին կարող է նա բախվել ամուսնական կյանքի ընթացքում: Եվ որպեսզի ընտանիքը լինի բարեհաջող, ապա բոլոր պատկերացումները պետք է լինեն համատեղ, որպեսզի ամուսիններից յուրաքանչյուրի վարքը չհակադրվի մյուսի պատկերացումներին: Զուգընկերների դերերը և՛ կնոջից, և՛ ամուսնուց պահանջում են ընտանիքում տնտեսումը, երեխաների հանդեպ պատասխանատվությունը: Հասարակության համար կարևոր է ոչ միայն ամուսնության կայունության փաստը, այլև ներընտանեկան հարաբերությունների որակը, դրանց խանգարումների հետևանքները: Շատ էական է համարվում ընտանիքում անդամների միջև աֆեկտիվ կապերը: Միջանձնային հարաբերությունները սուբյեկտների փոխադարձ պատրաստակամությունն է որոշակի փոխգործողությունների տիպին: Հուզական կայունությունը պայմանավորված է ամուսինների զգացմունքներով (սեր, համակրանք, հարգանք): Որպես կանոն, երեխաները ծնողների գործերը և առօրյան դարձնում են ավելի հաճելի: Ծնողների վերաբերմունքն իրենց երեխաների նկատմամբ շատ դեպքերում տարբեր է: Այժմ երեխաներով շատ ընտանիքներում կարելի է տեսնել, որ մեծերին հարգում են, իսկ փոքր երեխաներին երես են տալիս: Միջին տարիքի երեխաներին, որոնց մոռանում են, հիմնականում ավելի լավ մարդիկ են դառնում:

Ընտանիքը կարելի է բնութագրել որպես պատմականորեն կոնկրետ հարաբերությունների համակարգ ամուսինների միջև, որպես փոքր սոցիալական խումբ, որի անդամները կապված են ամուսնական կամ ազգակցական հարաբերություններով, կենցաղի ընդհանրությամբ և փոխադարձ բարոյական պատասխանատվությամբ, և որի սոցիալական անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակության^ա բնակչության ֆիզիկական և հոգևոր վերարտադրության պահանջմունքով: Դեռևս Արիստոտելն է նշել. Ընտանիքը հասարակության բջիջն է: Այսինքն^ա հասարակությունը, հետևաբար նաև պետությունը, կարող են առողջ լինել, եթե առողջ և կայուն է ընտանիքը: Իսկ եթե է ընտանիքը առողջ: Ընտանիքի հոգեբանության մասնագետները գտնում են, որ հոգեբանորեն առողջ է այն ընտանիքը, որում հուզական փոխհարաբերությունները ձևավորված ու կայուն են թե՞ ամուսինների, թե՞ ծնողների ու երեխաների միջև: Այսինքն^ա

առողջ ընտանիքում տիրում է դրական բարոյա-հոգեբանական մթնոլորտ:

Ամուսնությունը հենված է դրդապատճառների համակարգի վրա: Դրդապատճառները հենված են գիտակցության աստիճանի վրա և իրականացնում են անձի կյանքի կարևոր հարաբերությունները աշխարհի նկատմամբ, կազմում են մարդկային պահանջմունքների հիերարխիայի հիմքը: Ընտանիքի հոգեթերապիայի մասնագետ Հենրի Դիքսը դասակարգել է ամուսնության հետևյալ դրդապատճառները^a

Սերը

Մշտական սեքսուալ զուգընկեր ունենալու ցանկությունը

Հոգեբանական պատճառները

Երեխա ունենալու ցանկությունը

Կենցաղային խնդիրների լուծումը

Ստեղծված հանգամանքները:

Շատ մասնագետներ փորձել են պարզել, թե ինչ է սերը: Միայն սիրո միջոցով և սիրո գիտակցության միջոցով է մարդը մարդ դառնում, - ասել է Ֆ.Շլեգելը: Սերը մեր իսկական մարդկային բնույթի մի մասն է, այն հզորագույն զգացմունքներից մեկն է հույզերի ոլորտում, եթե ոչ ամենահզորը: Սերը խորը կապվածություն է երկու մարդկանց միջև: Սերը հաճախ շփոթում են սիրահարվածության հետ: Հասուն սերը զգայական հակման, մարդկային ջերմության և ուրիշի հետ ինտիմ մտերմության հոգեկան անհրաժեշտության օրգանական միասնությունն է: Միրահարվածն ապրում է ուժեղ և վառ զգացմունք, բայց այն կենտրոնացված է գլխավորապես իր և իր ապրումների վրա, նա պահանջկոտ է, անզիջում և էգոիստ: Իսկ հասուն սիրո մեջ ծանրության կենտրոնը տեղափոխվում է զուգընկերոջ վրա: Մարդը նախ և առաջ մտահոգվում է նրա մասին, ում սիրում է, նրա հետաքրքրությունների, բարօրության, երջանկության և ինքնաարտահայտման մասին՝ ողջ ուժերով նպաստելով վերջիններիս իրականացմանը: Ուրիշ մարդու մասին մտածելու ունակությունը, տալով^a ուրախություն ապրելու ունակությունը հասուն սիրո պարտադիր ուղեկիցներն են:

Սերը քաղց է ինչ-որ մեկի հանդեպ, մարմնի և հոգու ամենասուր քաղցը: Միրել^a նշանակում է հաճույք ապրել, երբ տեսնում ես, շոշափում, զգում բոլոր զգայարաններով այն էակին, որին սիրում ես, - ասել է Ստենդալը: Սերը կառույց է մեր բոլոր խորքային պահանջմունքների և զգայությունների վրա: Դա մարդկային ուժերի ամենասեղմ, ամենախտացված միաձուլումն է^a մարմնական և հոգևոր, գիտակցական և ենթագիտակցական ուժերի:

Սիրո ամենաբարձրագույն թռիչքը, նրա ամենապայծառ դրսևորումը հոգիների միաձուլումն է: Հոգու զաղտնարաններում առաջանում է ցավ ուրիշ մարդու համար այպես, ինչպես կցավես ու կանհանգստանաս ինքդ քեզ համար: Սերն ուշադրություն է, բարության, համբերություն, քնքշություն, երախտագիտություն, հարգանք և նվիրվածություն: Նա, ով սիրում է, ընդունում է իր սիրելիի հրապուրանքները, որպես իր սեփականները: Նա ընդունում է ուրիշին այնպես, ինչպիսին նա կա և հավատում է նրան: Նա, ով սիրում է, ունակ է զիջելու և ներելու: Ներումը իսկական սիրո ակտ է: Խիստ տարբեր է տղամարդու և կնոջ վերաբերմունքը սիրո նկատմամբ: Կինը հանճարեղ է իր սիրո մեջ, նրա վերաբերմունքը սիրո նկատմամբ ունի վերսալ է. նա սիրո մեջ ներդնում է իր բնույթի ամբողջ լիարժեքությունը: Իսկ տղամարդն ավելի շուտ տաղանդավոր

է սիրո մեջ, քան հանճարեղ: Նա իրեն ամբողջությամբ չի դնում սիրո մեջ և ամբողջությամբ կախված չէ այդ սիրուց: Կնոջ սիրո պահանջներն այնքան անսահման են, որ երբեք չեն կարող բավարարվել տղամարդու կողմից: Մերը դրականորեն է ազդում ընտանեկան հարաբերությունների բնույթի վրա այն ժամանակ, երբ զուգընկերները փոխադարձաբար կիսում են միմյանց դիրքորոշումներն իրենց համար կարևոր երևույթների, իրադարձությունների և արարքների հանդեպ: Ինչպես նշել է Սենտ-Էքզյուպերին. Իսկական սերը միմյանց աչքերին նայելու մեջ չէ, այլ՝ միասին նույն ուղղությամբ նայելու մեջ: Ամուսնական կյանքի հաջողության վրա ազդում է ամուսինների համատեղելիությունը բոլոր ոլորտներում, երբ մարդիկ ոչ միայն համատեղվում են, այլև լրացնում մեկը մյուսին: Մոցիալ-հոգեբանական համատեղելիությունը ենթադրում է որոշակի ընդհանրություն, որը կարելի է դիտարկել երեք մակարդակներում.

1. Բարձրագույն և առավել բարձր մակարդակը արժեքակողմնորոշիչ միասնությունն է՝ կենսական արժեքների, ձգտումների, իդեալների, հետաքրքրությունների, համոզմունքների միասնությունը, ինչպես նաև աշխարհայացքային միասնությունը:

2. Ֆունկցիոնալ-դերային սպասումների համաձայնեցվածությունը մարդկանց՝ իրենց դերերի և ֆունկցիաների մասին պատկերացումների համաձայնեցվածությունն էտվյալ միության մեջ:

3. Մարդկանց անհատական-հոգեբանական բնութագրերի համատեղելիությունը: Հետաքրքիր է, որ բարեհաջող զույգերը, որոնք ունեն կայուն և առավելագույնս համատեղելի հարաբերություններ, տարբերվում են հակառակ խառնվածքով. դյուրագրգիռ խոլերիկը և հանգիստ ֆլեգմատիկը, ինչպես նաև մելանխոլիկը և կենսուրախ սանգվինիկը կարծես լրացնում են իրար: Եվ հակառակը՝ երկու խոլերիկներից կազմված ընտանիքին կարող է սպասվել բարձր կոնֆլիկտայնություն ամուսինների պոթենցիալության և անզուսպության պատճառով: Պարզվում է՝ առավել ունիվերսալ զուգընկերներ են համարվում ֆլեգմատիկները, քանի որ նրանք հարմարվում են խառնվածքի ցանկացած տիպի հետ, բացի սեփականից: Չկա այնպիսի ամուսնական զույգ, որտեղ ամուսինները լիովին նման լինեն միմյանց: Մակայն պետք է նկատի ունենալ, որ համատեղ կյանքն աստիճանաբար հարթում է կտրուկ տարբերությունները ամուսինների հետաքրքրությունների, նախասիրությունների, հայացքների միջև, և առաջանում է գնահատականների ու վերաբերմունքի ընդհանրություն: Եթե տարբերությունները շատ են, պետք է հաբերել ու նաև ձգտել ավելի լավ հասկանալ ամուսնուն: Երբ ամուսիններն իրար լավ են հասկանում, նրանց բնավորության կամ խառնվածքի, վարքագծի խութերն ուժեղ չեն բախվում և խանգարում միմյանց: Երբ ամուսիններն անգամ իդեալական միասնության դեպքում հանդուրժում են միմյանց ինքնությունն ու անկախությունը, ապա զբաղմունքների տարբերությունը, բնավորությունների զանազանությունը չեն կարող տևական անջատման շարժառիթ ծառայել:

Եվ ընդհանրապես ամուսնության սկզբում կյանքը զարմանալիորեն հեշտ և ուրախալի է թվում, գրեթե իդեալական: Ի վերջո ռոմանտիկ հիացումներին փոխարինելու են գալիս կենցաղը, առօրյան՝ իր անխուսափելի սթրեսներով: Կենցաղն ամենամեծ փորձությունն է երիտասարդ ամուսինների համար: Միմյանց լրիվ բացահայտումն ու՝ գունազրկումը՝ երկրորդ ծանր քննությունն է նորապսակների համար, իսկ երրորդը՝ դերերի, պարտականությունների բաշխումը: Աստիճանաբար նրբագագությունը, քնքշությունը, հաճոյախոսությունները, երախտագիտության արտահայտությունները քչանում են՝ տեղ տալով փոխադարձ քննադատություններին: Հաճախ զուգընկերները դառնում են ավելի պակաս ուշադիր միմյանց նկատմամբ և ավելի էգոիստ, քան առաջ: Մառած զգացմունքները կարող են բազմաթիվ ընտանեկան կոնֆլիկտներ ստեղծել, ուստի սերն ամուսնության մեջ մշտապես պահպանել: Միաժամանակ պետք է հասկանալ և գիտակցել, որ մինչամուսնական, պատանեկան սերը և ամուսնական սերը նույնը չեն: Ներդաշնակ ընտանիքներում մարդիկ միշտ լսում են միմյանց

հույզերն ու պահանջմունքները, նրանք բարի են, քնքուշ, հավատարիմ ու համբերատար: Նրանց հարաբերությունները հիմնված են հարգանքի, փոխադարձ օգնության, ներողամտության վրա: Երջանիկ ամուսինների կյանքում մշտապես տեղի է գտնվում ուշադրության նշանների համար, որոնք արտահայտում են ջերմություն և հոգատարություն միմյանց նկատմամբ:

Օգտագործված գրականության ցանկ

Հոդվածներ, նյութեր համացանցից

<https://www.doctors.am/yntaniqi-tesaknery>

<https://168.am/2018/04/15/935825.html>

<http://www.hogeban.info/17171717.php>

https://hy.wikipedia.org/wiki/%D4%B8%D5%B6%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%B0%D5%B8%D5%A3%D5%A5%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B